

# Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

## Թիֆլիսի առևտրական գազեր:

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

### (ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվի կարելի է խմբագրողի մոտ:

Գազեթումը հրատարակվելու կրնողունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբագրատանը:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յունվարը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրը՝ 3 ման. թ:

#### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութենի կարգադրութիւններ: Թիֆլիսի Բեական զինադիւանի մասին: Թիֆլիսի ինկերների ուսումնարանի մասին: Տորդեր: Բանկերի վրայ: Նոր դիտեր հայերի մէջ էս վերջին ժամանակներումը: Չանաղան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ:

#### ԽԵՐԱԳՐԱՏԱՆԻՑ:

«Աւճառականի» խմբագրութունը յայտնում է, որ էս տարի յուլիսի 1-ից սկսած, բացի 10 ամսով ստորագրվիլը, ընդունում է նմանապէս և 6 ամսով ստորագրութիւն մինչև դեկտեմբերի վերջը: Էդ վեց ամսի համար դիւնը նշանակվում է Թիֆլիսումը՝ 1 մ. 50 կ. իսկ քաղաքիցը դուրսը, 2 մ.

Դեռ էլի շարունակվում է «Աւճառականի» համար ստորագրութիւնը առաջին №-ից էս գազեթի ճակատումը յայտնած գներով:

#### ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թիֆլիսի Բեական զինադիւանի մասին: Նորին կայսերական Բարձրութիւն, Կովկասեան փոխարքան Կովկասեան երկրի ուսումնարանների գլխաւոր հետազոտման միջնորդութեան համեմատ կարգադրեց էս 1866—1867 թւին Թիֆլիսի Բեական

զինադիւանը ուսումն առնող աշակերտներից պահանջել տարին 5 ման. թ սովորելու իրաւունքի համար: Էդ զինադիւանի ուսուցիչների ժողովը իրաւունք ունի չառնել էդ վազը էն աշակերտներից, որոնք լաւ են սովորում և որոնց ծնողները կներկայացնեն իրանց խեղճութիւնի մասին ապացուցութիւն:

Էս տարի յուլիսի 1 ից Բեական զինադիւան տեղափոխվեցաւ Կովկաս, Թիֆլիսի քաղաքացի Խվան Կարալովի տանը, որն որ պէտք է օրհնվի սեպտեմբերի 5 ին, իսկ ուսումը կսկսվի սեպտեմբերի 6-ից:

Էդ ուսումնարանը նոր մասնող աշակերտների ընտրութիւնը կսկսվի սեպտեմբերի 6-ից և կշարունակվի մինչև սեպտեմբերի 15-ը, առաւօտեան 10 սահմից մինչև կէսօրից յետոյ 2 սահմից:

Նրանց օրգերանցը զինադիւան տալ ցանկացող ծնողները պէտք է էդուր մասին խնդիր տան էդ զինադիւանի գրիտարի առնում և հետն էլ ներկայացնեն. 1) նրանց ծագման վկայարեւալ վկայագիր, 2.) նրանց ծննդու և մկրտելու մասին մտարիական վկայագիր և 3) նրանց առողջ կաղմվածք ունենալու և ծաղիկ պատուաստելու (կարելու) մասին վկայութիւն:

Թիֆլիսի ինկերներին ուսումնարանի մասին: Չինւորական մինիստրը Թագաւոր Կայսեր հրամանով կարգադրել է էս տարի սեպտեմբերի 1-ից Թիֆլիսումը հետեակ դրքի ինկերները համար ուսումնարան բաց անել, որտեղ պէտք է 200 հոգի սովորի:

Մեծ Իշխան Կովկասեան Փոխարքայի կողմից յայտնած շնորհակալութիւնը: Նորին Բարձրութիւն, Կովկասեան Փոխարքան յայտնեց իր առան-

ձին շնորհակալութիւնը Գորու բնակիչ Մովսէս և Եսայի Տէր Ստեփանեանցներին, ձրաբար իրանց պատկանած դեանի երկաթէ ճանապարհի համար տալու պատճառով:

#### ՏՈՐԳԵՐ:

Վրաստանի և իմէրեթի հայոց վիճակալին Կոնստանտնուպոլիսում էս տարի սեպտեմբերի 19-ին նշանակված է Թիֆլիսումը, Օրթաճալայի մօտ, Կուր դեպի ափին դռնված, Ստեփաննոս Գուլիփաչեանցի սուրբ Էջմիածնին և Թիֆլիսի Ներսիսեան հողատր դրոցին ընծայած այգու իջարով տալու տորգը: Ուրը կամենում է մանրամասը տեղեկութիւններ ստանալ էս տորգի մասին կարող է դառնալ յիշեալ Կոնստանտնուպոլիսումը, որ առաւօտեան 8 սահմից մինչև կէսօրը, բացի կիրակի և հանդիսաւոր օրերից:

#### Թ Ի Յ Լ Ի Ս

Օգոստոսի 27—1866.

Ամենազնասակար առևտրական և փողի կրիզիսները լինում են պատերազմի միջոցին և հացի պակաս տարիները և էդ ժամանակը ամենից պարզ երևում է բանկերի անօգուտ լինիլը, ոչնչութիւնը և տկարութիւնը հասարակութեան օգնութիւն հասցնելու մասին: Էդ տարիները օտար երկրներից հաց առնելու և զինւորական ծախսերը պատճառ են լինում ոսկու և արծաթի սահմանից դուրս կրելու, որն որ միշտ ժողովվում է բանկերումը և բանկերի զրամազրուխ կազմողն է: Էդպէս ահա երբ որ հացի պակասութեանի կամ պատերազմի ժամանակը բանկերից պա-

Հանջում են ոսկի և արծաթ, բանկերը սահարված են լինում ոսկու և արծաթի դուրս տանելը թոյլ չտալու և վաճառականների էհտիբարը պակսեցնելու:

1815 թից մինչև 1847 թիւը Ֆրանսիան տանուչորս անգամ ստիպված էր օտար երկրներից հաց առնելու և նրանց բանկը ամեն անգամ վաճառականներին մեծ ներդրութիւնների մէջ էր գցում, դրանց վեկիւնները ընդունելով միմիայն 45 օրվայ ժամանակով և բանկի շահը 6% -ից աւելի բարձրացնելով: Բանն էն է, որ սովի տարիները, երբ որ Ֆրանսիացոց տերութիւնը վերայնում էր ապրանքների մաքսը և թոյլ էր տալիս ազատ, առանց մաքսի հաց բերելը, հենց էն ժամանակը բանկը արգելում էր ոսկու դուրս տանելը, էդպիսով խախտելով ազատ առուտուրի պայմանները: Միթէ բանկը կարող չէ վարել իր գործերը առանց ոսկի և արծաթի դրամադրանքների, որոնք արգելում են բանկերին հասարակութենին օգտուէտ զբանկելու: Հարկաւոր չէ արգեծք բանկերը ազատել ոսկու և արծաթի ներգործութենից: Ահա խնդիրներ, որոնց լաւ կամ վատ վճռելուցը կարող է հասարակութիւնը կամ անտեսական յաւաճողիմութենի ճանապարհով երթալ գէպի առաջ և կամ շարունակ կրիզիսների զոհ լինիլ: Հեան ու հետըքանի որ ժողովրդների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները շտտանում են, էնքան էլ կրիզիսները սաստկանում են և մեծ մեծ վնասներ են տալիս: Բոլոր երեւելի տնտեսները համաձայն են, որ երբ որ մէկ երկրի ապրանքների մուտքը շատ է քան թէ եւքը, էն ժամանակը բանկերը շտտ վատ դրութենի մէջն են լինում մինչև էն տեղը, որ մօտենում են կուտրութենին:

Բանկերի հաշիւներից երևում է, որ էդ ժամանակները դրանց անդուկները լքցվում են վեկսիւններով, իսկ ոսկին պակասում է, պատճառը որ վաճառականների մէջ էդ ժամանակը էդ մետալը

մեծ պահանջորդութիւն կայ: Ինչպէս յայտնի է, բանկը դրաւ է վեր առնում վեկիւններ և տեղը դուրս է տալիս ոսկի ու արծաթ կամ իր սեփական տունտակները, որոնց ներկայացնելիս պարտաւոր է վճարել ոսկի կամ արծաթ: Բայց շտտ անգամ բանկի տոմարի ոսկու վրայ փոխելը (խուրդայ անելը) բանկի տիրոջից չէ կախված. էդ ժամանակ բանկը իր ամեն ժամանակ փոխելու պայմանը կտրում է, էլ չէ ընդունում իր տոմարները, կամ թէ ընդունում է շտտ պակաս գնով: Բանկը չէ կարող խուրդայ անել յանկարծ բոլոր իր տոմարները էն պատճառով, որ իր ոսկին ու արծաթը երբեմն մինչև 100 անգամ պակաս է լինում իր դուրս տված տոմարների գումարից: Ամերիկայի բանկերումը պատահում է, որ իր ունեցած ոսկին դուրս տված գումարի միայն 4% է: Չէ որ հեշտ կարող է բանկը կուտրանալ և կրիզիսի պատճառ դառնալ, եթէ յանկարծ դրա բոլոր դուրս տված տոմարները ներկայացնվին խուրդայ անելու և դա ոսկի չունենալու պատճառով ստիպված լինի բացասել: Անդամ դար կուտրութիւններ և կրիզիսներ— ահա Անգլիայի, Ֆրանսիայի և Ամերիկայի բանկերի կարճ պատմութիւնը: Կա բոլորը ջոյց է տալիս, որ և բանկերը ու էհտիբարը բաց ի մնասից ոչինչ օգուտ չեն բերած մարդկութենին: Միմիայն աշխատանքը և էն էլ արդար աշխատանքը և վեր ածած դառը քրտիները մինչև էսօր ծնել է և ապագայում ևս պէտք է ծնի հարստութիւն, իսկ էհտիբարը միշտ տեղիք է ավել և ստիպել է մարդկանց ուրիշների և ապագայ բարօրութենի հաշուէն սպրել:

Ա. Ե.

ՆՈՐ ԳԻԻՏԵՐ ՀԱՅԵՐԻ ՄԷՋ ԵՍ ՎԵՐՁԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄԸ:

Կարդացողները ի հարկէ պէտքէ դարձան, թէ արդեօք էս ինչ նոր գիւտեր են, որ հայերի ջտրծրով լոյս են տեսել և էն էլ էս վերջին ժամանակներումը: Զարմանալի

բան ոչինչ չկայ աշխարհիտ երևան: Հայերն առաջ են գնում ուսումի և գիտութենի միջնորդութենով և իհարկէ առաջ գնացող աղքատ անկարելի է, որ որ և իցէ գիտութենի մէջ նոր բան չգտնէ և էդ նոր գիւտը աշխարհէ աշխարհ տարածվելով պէտք է հաստացնէ գիտութիւնը, ապա ուրեմն և նոր գարկ տայ յառաջադիմութենի անխիւն:

Կս պատճառով էլ չկամեալով ծածկել մեր հայերի աշխատանքում գիւտերը, բացարձակ յայտնում ենք բոլորին էստեղ խանալու և ապրածելու ամեն միջոցով բոլոր երկրները և աղբիւրի մէջ:

Մեր առած նոր գիւտերի հեղինակները «Գարունի» և «Հայկական աշխարհի» խմբագրողներն են: Եւ խիստապէս վերաբերվում է մեր խօսքը «Գարունի» էս տարվայ 5-դ ՊՅ-ին և «Հայկական աշխարհի» 3-դ, 4-դ և 5-դ ՊՅ ներքին, որոնք լոյս տեսան էս վերջին ժամանակներումը:

Բայց կարող պահպանելու համար, որ չլինի թէ գիտնականները խառը դրած տեղեկութիւնները չընկնն, էսօրը համար էլ էն նոր գիւտերը բաժանում ենք կարգ կարգ, ինչպէս և գիտութիւններն են բաժանված:

Եդ ժուրնալների նոր գիւտերը էս ձևով ենք բաժանում կարգ կարգ՝ ա. կրօնական գիւտ, բ. փիլիսոփայական, գ. մատենատիպայական, դ. ֆիլոլոգիական, է. ստատիստիկական և գ. գեղարուեստական:

Կը օն ա կ ա ն գիւտը տեսնում ենք «Գարունի» վերոյիշեալ ՊՅ ումը, որտեղ հաստատվում է 269—279 երկններումը, որ Պետրոս առաքեալը բոլորովին Հռովմ քաղաք չէ գնացել: Սթէ նա Հռովմումը լինելը, միթէ Ղուկաս աւետարանիչը, որն որ Հռովմումը դրեց իր աւետարանը չէր տեսնի նրան և չէր յիշի նրա մասին իր գրուածքներումը: (եր. 279):

Կարծիք չկայ, բոլորովին էդպէս է պիտեալորդ: Սաւա են առում պապականները, թէ Պետրոսը էլէլ է Հռովմ և էտտեղ էլ նահատակվել է:

Տեսնում էք ի՞նչ լաւ տեղիցն է լուսել խմբագրողը:

Հիմի ի հարկէ ամենի համար պարզ է և ոչով չի համարձակիլի սրանից յետոյ անել, թէ Պետրոս առաքեալը Հռովմ է էլէլ:

Ի՞նչպէս պարզ և հասարակ բան է էդ գիւտը, բայց մի և նոյն ժամանակը նա խելքը կհասնէր դրան մինչև հրատարակելը: Էդպէս է առհասարակ մեծ և երևելի գիւտերի բանը:

Փիլիսոփայական գիւտը «Հայկա-

կան աշխարհի, 141 երևին ենք դանում: Իրախուսում է էդ ժարնալի խմբագրողը մեր երիտասարդներին իրանց պարտականութիւնները կատարելու և առանց գործի չմնալու, որովհետև անդործունէութիւնը մեռելաբանի նշան է և էդ բանը, այս ինքն անդործունէութիւնը «Հայկական աշխարհի» մշտական սուրբ աղօթքն է:

Նոր դիւտ չէ, ապա ինչ է, Աստուած սիրէք: Երիտասարդները պէտք է առանց գործի չմնան, պէտք է կատարեն իրանց պարտականութիւնները, բայց «Հայկական աշխարհի» խմբագրողը ոչ թէ գործ չպէտք է չինէ, այլ և անդործունէութիւնի համար սուրբ աղօթքներ մեր առաքէ Աստուծուն: Լան է, թէ չէ:

Մատիմատիկան դիւտը անկասկած դարձանք պէտք է բերէ ոչ թէ միայն մեզ հայերիս, այլ և բոլոր եւրոպացոցը, եթէ միայն մէկ հնարքով նրանցն իմաց անվի էս դիւտը: «Հայկական աշխարհի» 182 երեսումը կտնտնէք էդ դիւտը: Պ. խմբագրողը ասում է, թէ «Գարունի և Վաճառականի, Թիֆլիսի երկրորդականի մասին ոչ ինչ է այս անգամ»: Եւ էդ բառերից յետոյ 15 տող բան է դրած «Վաճառականի» մասին:

Ոչինչը մատնամարտիկայումը դրվում է էս նշանով 0, որ հայերէն զրօ է կոչվում և նշանակում է ոչինչ, մէկ բանի չլինելը: Բայց «Հայկական աշխարհի» խմբագրողի մատնամարտիկայական կանոններով, իբր ասած էս բառերը—, Սքա միմանցից յատկութիւններ ևս փոխ են ասում: (Ինչ որ, երբ) «Վաճառականի» 14 Ձևում տպված է մի յօդված «Առողջութիւնը ուսումնարանների մէջ»: Այդ յօդվածը բառացի թարգմանութիւն է այս տարվան «Чужие» օրագրից № 2, բայց թարգմանութեան մասին ոչ մի խօսք չկայ ասված: Լա է . . . Համբերեցէք, կտուրէք ճիշդ լինել . . . դոնէ հրապարակարար: (?) Նոյն Ձևում թերթը յայտնում է, որ ստորագրութիւնը դեռ չարձանակվում է և երբ կ'առնեն սակալաթիւ մնացած Ձև Ձևները, կ'այտնեն ստորագրողներին: Հայեր, չտասկեցէք, փրկվեցէք շուտ: «Արքայութիւնն ընտանգատի և բառերը յափշտակեն»: Ստորագրվեցէք շուտ «Վաճառականի» մնացած թերթերին: Volenti non fit injuria (կամեցողին անգատութիւն չէ): Բնիկ Թիֆլիսեցի Հայի դրամատիկական հանձարը այստեղ ևս կ'զանէք (№ 17), որպէս ամենքնալի յօդվածը,—հաւասար է 0:

Անմիթարական է էս ճշմարտութիւնը, բայց նոր դիւտը պահանջում է հաւատալ, որ

էս 15 տող բանը հաւատար է ոչնչին: Այդ որ մատնամարտիկ գլխումը կ'ծաղէր էս միտքը:

Ֆիւլսոփիական դիւտը ասելի զօրուոր է: «Հայկական աշխարհի» 111 երեսումը կ'զանէք էդ դիւտը:

Ապացիալիսա բառը մեկնած է հայերէն էս բառերով—հասարակաց բարօրութեան համար մտածողներ:

Ըն որ ֆիլոսոփիան է համարձակելում հաստատել, թէ սոցիալիստը որ և իցէ դիտութեան, ճարտարութեան կամ արհեստի մէկ ճիւղով յատկապէս պարագոյն է: Ինչպէս մշտված են խեղճերը, որ էսպիսի պարզ բաներ չեն հասկանում:

Մատիմատիկան նոր դիւտը տեսնում ենք «Գարունի», 284 երեսումը, որտեղ քաղաքիս 95 համբարների անունները տալուց յետոյ յայտնած է, թէ մէկ նոր համբար էլ նոր է աւելացել քաղաքիս, որ կոչվում է Քէլէխ սւտող:

Միայն լրակատար չէ ասած բոլորը էդ նոր համբարի մասին: Թէ արդեօք դրանք էլ ունին ստաբալի թէ չէ և թէ միւս համբարների կանոններով են վարում իրանց դործը, թէ ուրիշ կերպով: Պէտք էր պատմել անպատճառ, էդ համբարի մասին կտտարեալ հատկացողութիւն ստանալու համար:

Գեղարուսեւոտական դիւտը նմանապէս «Գարունի», մէջն է, 317 երևին: Մեր հայոց աշուղներն, ասում է, համարձակ կարող ենք ասել, որ էնպէս են չարժիւմ և գունաթափվում, ոչ սրկաս Թիֆլիսի իտալացոց թէտորի խաղողներից:

Ոչ պակասը կնշմանկէ և ոչ աւելի ուրեմն հաւասար: Թող իմանան Եւրոպացիքը, որ մենք էլ հաւասար ենք իրանց գեղարուեստների մէջ: Թնգ իմանան, որ Օձնայ փողահար Ղալին և երգիչ Մացոն (եր. 319) չէ պակաս իր Պատարիներից և Տամբլիկներից:

Ինչքան բան ծածուկ էր մնացել մեղանից և հիմի մեր հայոց ժողովուրդների միջոցով դիտական աշխարհի ժառանգութիւն է դառնում:

Այն, բոլորովին պարտաւորել էք ձեզ դիտականներին:

**ՉԱՆԱԽՈՒ ՀԱՅՈՅ ԱՂԳԱՅԻՆ ՀՈԳ-**

**ԼՈՐ ՂԱՊՐՈՅՐ:** Շամախու վիճակի առաջնորդ Գանիէլ արք—կաթիկոսոս Շահնաղարեանցի աշխատութիւնով էս տարի

յունալարին Շամախու հայոց աղգային հոգեւոր գալրոցը կարգադրվել է, մէկ առանձին հոգաբարձութիւն սարգելով էդ ուսումնարանի համար և դպրոցի համար հաստատականապարտութիւն գրելով: Կա ուսումնարանի թէ հոգաբարձութիւնը և թէ կանոնադրութիւնը հաստատել է էս տարի ապրիլի 23-ին Էջմիածնի հայոց սինոդը:

Ուսումնարանը պէտք է ունենայ 6 հոգաբարձու, որոնց քուէով ընտրում են քաղաքի 2 եկեղեցեբուց ընտրած 30 պատգամաւորները: Ուսումնարանի տեսուչը նմանապէս հոգաբարձու է համարվում:

Էդ դպրոցը կանոնադրութեան հիման վրայ պէտք է դրնովի հայոց Էջմիածնի կաթողիկոսի և սինոդի լրակատար տեսչութեան տակը և դրա գլխաւոր նպատակն է պատրաստել արժանաւոր հոգեորականներ և առ հասարակ հայոց աղղի համար լուսաւորեալ անդամներ:

**Պարսկից բամբակը:** Աշուրաղէից գրումն, որ կատար ծովի կրկրկի ափին մեծ բամբակ է դալիս և էստեղից ուղարկվում է Հաշտարխան և Բաքու: Առաւօտից մինչև իրիկուն պարսիկները պարապումն խաղվարների Լըքնելով: Բամբակի դները վեր են ընկնում: Էս տարի դուրս է բերվել էդ տեղից բոլորը 30,000 փութ բամբակ:

**1865 թւին Ռուսաստանումը մասնաւոր մարդկանց հանքերից**

**Հանած ոսկին:** Ռուսաստանումը, պէտք է ասած, որ մէկ քանի ոսկի հանքերը տերութեան ձեռին է և նա է մշակում, իսկ միւսները մասնաւոր մարդկանց ձեռին են: Հերու մասնաւոր մարդիկը բոլոր Սիբիրումը և Ուրալեան սարերումը մէկ տարվայ մէջ հանել են 1350 փութ, 10 ֆունտ և 93 մսխալ ոսկի: Հայկուց յետոյ մարքած ոսկի է ստացվել բոլոր Սիբիրումը 1,080 փութ, 2 ֆունտ և 12 մսխալ: Ուրալեան սարերումը՝ 224 փութ 26 ֆունտ և 71 մսխալ: Սիբիրի ոսկու դինը՝ 13,931,434 մանէթ է և Ուրալեանինը՝ 2,907,434 մ. 98 կոպ. Ուրեմն էս հաշից երևում է, որ մասնաւոր մարդիկը 1865 թւին մէկ տարվայ մէջ Սիբիրումը և Ուրալեան սարերումը հանել են 16, 838,768 մանէթի և 98 կոպէկի ոսկի:

**Ռուսաստանի երկաթէ ճանապարհների մասին:**

Երկաթէ ճանապարհների կոմիտեոը էս տարի ապրիլի 23-ին հաստատել է արդէն շինելու համար առաջին տոտիճանի երկաթէ ճանապարհները Ռուսաստանումը:

Էս չորս տարուամբ և մինչև վեց տարին անսպասաձառ պատրաստ պէտք է լինին Ռուսաստանումը հեռուեալ երկաթէ ճանապարհները՝

- Մոսկովից մինչև Օրեոլ . 366 վերսա,
- Օրեոլից մինչև Կուրսկ . . 145 վերսա,
- Կիեվիցմինչև Բալտա երկու ճիւղերով մէկը դէպ ի Բերգիչեվ և մյուսը դէպ ի Վոլոչիսկ . . . . . 622 3/4 —,
- Տիրասպոլից մինչև Քիչինեով . . 65 —,
- Բալտայից մինչև Նլիսավիտզրատ 245 —,
- Նլիսավիտզրադից Կրեմնչուգով և Պոլտավայով մինչև Խարկով . . . . 361 —,
- Կուրսկից Խարկովով մինչև Ազովեան ծովը 727 —,
- Բեաժսկից մինչև Մորչանսկ . . 120 —,
- Փոթուց մինչև Թիֆլիս . . . . 244 — :

Ընդամենը 3373 3/4 վերսա :

**Ռուսաց ժողովրդական նախակրթարանների համար կրօնագիտութենի դասադիրք շինելու մասին:** Էս տարի ռուսաց մինչօրը և ազգային լուսաւորութենի նախարարութիւնը առաջարկեցին ցանկացողներին շինել ժողովրդական նախակրթարանների համար կրօնագիտութենի դասադիրք: Յանկացողները իրանց շինած դասադիրքերը կուղարկեն նըշանակած տեղերը, կքննվին և ամենից լաւին կտվի 1,500 մ. վարձատրութիւն:

Էսպիսի առաջարկութիւններ անվում է առհասարակ և միւս երկիրներումը և դրանց նպատակն է նշանակած վարձատրութիւն խստամալով շատերին պարագեցնել մէկ որոշած գործով և ի հարկէ եղպես խրախուսելով կարելի է համեմել նպատակին, այս ինքն ամենից լաւ և յարմարաւոր դասադիրք ձեռք բերելուն:

Մենք որ կամ բողոքովին չունինք ուսումնարանների համար դասադիրքեր և կամ ունինք մէկ քանիսը անթիւ պահասութիւններով, պէտք է հետեւինք էդ օրինակին: Կովկասեան երկրումը Ներսիսեան ուսումնարանը կարող էր եթէ 1000 մանէթներ չէ, դոնեա 400 մանէթներ խստամալ աշխատողներին դնազան դասադիրքեր շինելու մեր ժողովրդական ուսումնարանների համար:

**Սուխում-կալէյի ուսումնարանը արհեստաւորների համար:** Էս տարի Սուխում-կալէյումը բաց էլաւ արհեստաւորների համար ուսումնարան, որտեղ որ պէտք է 15 հոգի Աբխազեցիներից սովորին

այդեպանութիւն, պարաիզպանութիւն և ուրիշ արհեստներ:

**Աստուղի ծովի առևտրական շոգենաւների մասին:** Մէկ շաբաթ չէ անց կենում, որ «Կովկաս և Մերկուրիայ» ընկերութենի շոգենաւները գալիս են ապրանքներով Հաշտարխանից Բաքու, գնումն լինքարան և Պարսկաստան. յետոյ էն տեղից յետ են դառնում էլի Հաշտարխան նոր էլի ապրանք բարձելու: «Կասպիսի ընկերութենի», առադատաւոր նաւերը նմանապէս կանոնաւոր են բանում: Անդադար կահանես որ ընկերութենի նաւահանդատումը 2, 3 նաւ դարդկում է ապրանքները: Մէկ ամսից յետոյ պէտք է բանեն նմանապէս պ. Բոխլիկի նոր ընկերութենի շոգենաւները:

«Կովկաս և Մերկուրիայ», ընկերութիւնը ամսէնը երկու անգամ փոստա է բերում և տանում Բաքու: Էդուր համար երկու շոգենաւ է նշանակված: Էս երկու շոգենաւները գալիս են Բաքու շաբաթ օրերով. նրանցից մէկը Հաշտարխանից գնումէ Կասպիսի ծովի արևմտեան կողմովը մինչև Աստրաբաղեան ծոցը. իսկ միւս շոգենաւը յետ է գալիս Պարսկաստանից և մտնումէ Բաքու: Էդտեղ երկու շոգենաւները պատահումն են միմեանց:

**Խօլերայի մասին:** Պետերբուրգումը օգոստոսի 9-ին հիւանդացաւ խօլերայով 197, մեռաւ 21: Օգոստոսի 10-ին հիւանդացաւ 277, մեռաւ 21:

Մոսկովումը օգոստոսի 9-ին հիւանդացաւ 15, մեռաւ 5: Օգոստոսի 10-ին հիւանդացաւ 21, մեռաւ 9:

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:  
ՆԱՄԱԿՆԵՐ ՄԱԿԱՐԻՍՅՈՅ ԵԱՐՄԱՐԿԱՅՈՅ:

**Նիժնի-Նովգորոդ, օգոստոսի 8:** — Յայտնի է, որ ամեն ժամանակ տարվայ պողաբերութիւնը և մանաւանդ հացի առատութիւնը առուտուրի լաւութենի պատճառ է կէլ: Էս անգամ էլ մի և նոյնն է պատահում: Էս տարի ողջ Ռուսաստանումը հացի բերքը լաւ պողաւէա է: Մակարիայի եարմարկայումը առուտուրը շատ լաւ սկսվեցաւ, մանաւանդ չեթեղէինը: Էս տարի առհասարակ 10% թանկ է չեթը, քան թէ անցեալ տարի. բայց հիմիկվան գները դեռ վճռական չեն, որովհետեւ դեռ չեն ծախված բամբակը, լե-

զակը, տորոնը և ուրիշ ապրանքները որոնցից կախումն ունի և չեթի մազանդան: Ի վաճառի կոչված տեսալ չեթի առնողները մեր Կովկասեան հայերըն են և պարսիկները:

Էս տարի մանաւանդ շատ են բերել ծախու կաւեղէն և մանաւանդ Հոլանդիայի կաւեղէնից:

**Երկաթեղէնը մեծ մասով Սիբիրի և Ռուրալեան հանքերիցն է:** Էս տարի 600,000 փութով պակաս է բերված քան թէ անցեալ տարվայ եարմարկայումը, երբ որ մօտ 4,000,000 փութ երկաթ էին բերած: Երկաթեղէնի մազանդան թերթերը (լիսաւոյն) 2 ս 60 կ., կողը երկաթը — 1 մ. 55 կ փութը:

Եարմարկայումը օգոստոսի 3-ին խօլերայով հիւանդ կար 23 հոգի:

**Նիժնի-Նովգորոդ, օգոստոսի 8:** — Եարմարկայումը Կեխտայ չայն ծախվեցաւ անդուկը (եաշչիկը 115—117 մանէթ, իսկ Կանաճնի չայ Ֆունար 90 կ.—1 մ. 70 կ: Հիմիկվա չայի բարձր գները ոչ թէ էնդուրից որ քիչ է բերվել եարմարկայ (44,00 եաշչիկ), այլ Ե-բոպայի բիրժաներուս Ռսի փողի կուրսի վեր բնկնելուցը: Ղալ մուխի չայ է բերված միայն 7,000 եաշչիկ: Գեռ չէ ծախված: Եաշչիկին 65 են տալիս, բայց ծախողը աւելի է ուզում:

Եաքար է բերված եարմարկան 7,00 բոչկայ (տակառ): Ծախվեցաւ փութ 9 մ. 35 կ.—9 մ. 80 կ:

Վիկեպուլ օգոստոսի 10:

Երեկ 10,000 հակ բամբակ ծախվեցաւ, էսօր 8,000 հակ: Գները բարձրանում են:

Թիֆլիս օգոստոսի 26:

- Եաքարը Յրանսիացոց 9 մ. 80
- Ռսինը . . . . . 10 մ. 60
- Արծաթը 84% . . . . . —
- 72% . . . . . 75 մ
- Ոսկին . . . . . 6 մ. 70